ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀՈԲԱՐԾՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

22.12.2016թ

N 114

ՀՀ Լոռու մարզի մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Մեծարգո պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Հոբարծի համայնքի ավագանու 16.12.2016թ.-ի թիվ 29 որոշումը և 2016-2021թ.թ-ի հնգամյա զարգացման ծրագիրը:

Համայնքի ղեկավար՝ _____ Գագիկ Ղարաջյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՀՈԲԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀայաստանիՀանրապետությանԼոռումարզի
Հոբարձիհամայնք, հասցե գ. Հոբարձի
էլ.Փոստ՝ hobardzi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16»դեկտեմբերի 2016 թվականի N 29

ՀՈԲԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2021Թ.Թ-ի ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին քննարկեց և որոշեց՝

հաստատել 2016-2021թ.թ-ի հնգամյա զարգացման ծրագիրը:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ասրյան Արտակ Ռոստոմի			
Ալավերդյան Կամո Կարլենի			
Ալեքսանյան Արայիկ Լյովայի			
Դավոյան Արսեն Մարտունի			
Սոֆյան Գառնիկ Գրիգորի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Գ.ՂԱՐԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈԲԱՐԾԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2021Թ.Թ.- ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար_____Գագիկ Ղարաջյանը

Հաստատվել է համայնքի ավագանու_07_____ նիստում

Հոբարծի 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակ 6
   2.3. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 9
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 10
   3.1. Համայնքի զարգացման տեսլական 11
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 11
4. ՀՀԶԾ ֆինանսավորում 12
5. ՀՀԶԾ մոնիթորինգ 13

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Սույն մեթոդաբանությունը սահմանում է Հոբարձի համայնքի զարգացման ծրագրի (ՀՀԶԾ, Ծրագիր) մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, գործիքակազմը, գործընթացը և նպատակաուղղված է համայնքի կայուն զարգացումն ապահովող չափելի արդյունքների սահմանը և միջոցառումների նախանշմանը:

Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում:

Մեր համայնքը ունի լուրջ հիմնախնդիրներ,որոնք խանգարում են համայնքի բնականոն զարգացման ընթացքը: Դրանք են՝

1.Համայնքի տարածքում բացակայում են կարկտահարման կայաններ: Արդյունքում բնության քմահաճություններից լուրջ վնաս է հասցվում գյուղատնտեսությանը: Լինում են դեպքեր, երբ 100%-ով ուժեղ կարկուտից վնասվում են գյուղացիների ցանքսերը/2014թ. հուլիսի/:

2.Գյուղի վարելահողերը մշակվում են խորհրդային տարիների հնամաշ գյուղտեխնիկայով: Արդյունքում վարելահողերը թերի են մշակվում :

3.Գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհները ունեն լուրջ վերանորոգման կարիք: Խոտհարքների մի մասը չի հնձվում՝՝ դաշտամիջյան ճանապարհների անմխիթար լինելու պատճառով:

4.Համայնքում գրեթե բացակայում են փողոցային լույսերը:

5.Համայնքում կիսակառույց է մշակույթի տունը: Որի պատճառով խաթարված է բնակչության մշակույթային կյանքը: Չկան հանգիստն անցկացնելու ժամանցային վայրեր:

6.Բուժկետի տանիքը և հատակը լուրջ վերանորոգման կարիք ունի:

7.Անհրաժեշտ է աղբահավաքման վայրի հիմնում՝ ապահովելով շրջակա միջավայրի սանիտարական հիգենիկ վիճակը:

8.Մանկապարտեզի տանիքը և հատակը նույնպես լուրջ վերանորոգման կարիք ունեն:

2.Համայնքի իրավիճակի նկարագրությունը

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Հոբարձի համայնքի աշխարհագրական դիրքը

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1350մ բարձրության վրա:Գյուղի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է թե հաղորդակցման, թե բնակլիմայական տեսակետից:Գյուղը շրջապատված է սարերով, անտառներով, խոր ձորերով: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ զով:Գյուղը ամռանը իր հրաշալի բնությամբ,առողջարար օդով սառնորակ աղբյուրներով, զովասուն անտառներով մշտապես դեպի իրեն է ձգել հովեկներին:
Տեղումները երբեմն չափից ավելի են լինում՝կարկտահարություն, քամու ուժգնություն, սելավներ, որից տուժում է գյուղացին:
Հոբարձի համայնքի մուտքերը ապահովվում է հողի հարկերից, գույքահարկերից, տեղական տուրքերից, պահուստային հողերի վարձավճարներից:

Ժողովրդագրություն ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ–ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

		Մշտական			Առկա		
		ընդամենը	այդ թվում՝		ընդամենը	այդ թվում՝	
			արական	իգական		արական	իգական
1	բնակչության թվաքանակը, մարդ	836	431	405	859	439	420
2	տնային տնտեսությունների թվաքանակը	269	X	X	435	X	X
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/	3	X	X	425	X	X

	բնակվող						
2.2	կիսակառույց տներում բնակվող	9	X	X	9	X	X
3	ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	70	X	X		X	X

Հոբարձի համայնքի բնակչության բաշխումն ըստ հետևյալ տարիքային խմբերի (մարդ).

		այդ թվում՝ արական	այդ թվում՝ իգական	Ընդամենը
1.	մինչև 1 տարեկան.....	7	-	7
2.	1-2 տարեկան.....	12	10	22
3.	3-4 տարեկան.....	12	9	21
4.	5-6 տարեկան.....	13	6	19
5.	մինչև 6 տարեկան.....	44	25	69
6.	7-10 տարեկան.....	16	13	29
7.	11-14 տարեկան.....	16	8	24
8.	15-17 տարեկան.....	20	14	34
9.	մինչև 16 տարեկան.....	95	61	156
10.	մինչև 18 տարեկան.....	109	85	194
11.	18-22 տարեկան	23	32	55
12.	23-45 տարեկան.....	138	138	276
13.	46-62 տարեկան.....	90	87	177
14.	63 և ավելի տարեկան	75	82	157

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Հոբարձի համայնքը կառավարում է համայնքի կողմից ընտրված ղեկավարը(որն ընտրվում է հինգ տարին մեկ):

Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմի հետևյալ կառուցվածք՝ տեղակալ, աշխատակազմի քարտուղար, առաջատար մասնագետ, առաջին կարգի մասնագետ, ավտովարորդ, աղբ հավաքող բանվոր և հավաքարար:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վիճակը

- Մշակույթի տուն-անավարտ շինություն
- Բուժկետ՝ աշխատում է մեկ բուժքույր: Բուժկետը ենթակա է վերանորոգման տանիքը և հատակը
- Մանկապարտեզի շենք: Մանկապարտեզը գործող է, որտեղ աշխատում են 8 հոգի՝ տնօրեն, չորս դաստիարակ, խոհարար, հաշվապահ և հավաքարար: Այն ենթակա է վերանորոգման տանիքը և հատակը

Գյուղն ունի կիսակառույց բնակելի տներ: Գյուղտեխնիկան և գործիքները սեփականաշնորհված են: Տնտեսական անկման հետևանքով գյուղի վիճակը վատթարանում է: Պահեստամասեր և քսայուղեր չլինելու հետևանքով անմխիթար վիճակում է գյուղտեխնիկան և գործիքները:
Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1964թ, որի մաշվածությունը այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 60%-ի: Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 238 առանձնատուն: Կան բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքներ, որոնց թիվը տարեցտարի աճում է: Կան բազմաթիվ կիսավթարային շենքեր(երկրաշարժի պատճառով), որոնք նյութական և դրամական խնդիրների պատճառով չեն վերանորոգվում:

Հողատարածքների օգտագործումը

Համայնքի վարչական տարածքը	995,89հա
Վարելահողեր	301,6հա
Խոտհարք	75,5հա
Գերեզմանոց	1,86հա

Դպրոց	0,59հա
Հուշարձան	0,32հա

Մեկ հողաբաժնի չափը

Վարելահող	0,8հա
Խոտհարք	0,2հա

2.2Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը

		Ընդունված բյուջե	Փաստացի՝
1	Ընդամենը եկամուտներ, որից՝	18518,4	15778,136
2	ա/Հարկային եկամուտներ, ընդամենը	3985.4	2691,5
2.1	այդ թվում՝ հողի հարկ	1856,3	1501,0
2.2	գույքահարկ	2129,1	1190.5
3	բ/ Տուրքեր, ընդամենը	73,0	73.0
3.1	այդ թվում՝պետական տուրքեր		

3.2	տեղական տուրքեր	73.0	73.0
4	գ/ Ոչ հարկային եկամուտներ, ընդամենը		
5	դ/ Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	13762.0	13762.0
5.1	այդ թվում՝ դոտացիա	13762 .0	13762.0

Համայնքում առկա անասունների և անասնահամաճարակից ոչնչացված անասունների գլխաքանակը

(գլուխ)

		Ընդամենը	Անասնահամաճ ա-րակից ոչնչացված
1.	Խոշոր եղջերավոր անասուններ	546	0
	որից՝		
2.	կովեր	170	0
3.	Խոզեր	403	0
4.	Ոչխարներ և այծեր	395	0
5.	Ավանակներ և ջորիներ	-	0
6.	Ձիեր	17	0
7.	Հավեր և/կամ այլ թռչուններ	1555	0
8.	Նապաստակներ և ճագարներ	-	0
9.	Մեղվաընտանիք /փեթակներով/	290	0
10.	Այլ		0

համայնքի և/կամ նրա բնակիչների սեփականություն հանդիսացող.

1. մարդատար ավտոմեքենաների քանակը, հատ.....	90
2. բեռնատար ավտոմեքենաների քանակը, հատ.....	24
3. ավտոբուսների քանակը, հատ.....	1
4. միկրոավտոբուսների /երթուղային տաքսիների քանակը, հատ.....	1
5. տրակտորների (թրթուրավոր և անիվավոր) քանակը, հատ.....	22
6. այլ գ/տ մեքենաների քանակը, հատ.....	4

2.3Համայնքում ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը

Համայնքն ունի ավելի քան 30 բուհ-ի շրջանավարտ տարբեր մասնագիտությունների, որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքներ:
Գյուղում կառուցված է Հայրենական Մեծ պատերազմում զոհված մարտիկների հիշատակին նվիրված հուշարձան: Գյուղն ունի դպրոց, դպրոցին կից մարզադահլիճ, մանկապարտեզ, բժշկական կենտրոն: Գյուղը չորս ուղղությամբ ունի ջրատար կոյուղի, գազաֆիկացված է 95%-ով, կա խմելու ջուր 99%-ով: Գյուղի գետափին ունենք <<ՈՒռենի>> ռեստորան: Զարգացած է ոչխարաբուծությունը, անասնապահությունը, գյուղում կա 300 մեղվաընտանիք: Գյուղի բնակիչները հիմնականում հաղորդակցվում և առևտուր են անում Ստեփանավան, Վանաձոր քաղաքների հետ:

Համայնքի թույլ կողմերը

Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակը,ոռոգման ջրի բացակայությունը: Գյուղի տարածքում բացակայում են կարկտահարման կայաններ,որը շատ բացասաբար է ազդում գյուղատնտեսության վրա : Մշակույթի կիսակառույց շենքը, եկեղեցու վերակառուցման հարցը, գործող մանկապարտեզի տանիքի և հատակի վերանորոգման խնդիրը: Գյուղի ներսում ճանապարհները խճապատված չեն: Գյուղապետարանը տեղավորված է բուժկետի շենքում, չունի սանհանգույց և խմելու ջուր:
Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Ծնելիության նվազումը կապված է տնտեսական վիճակի վատթարացման հետ:

Համայնքին սպառնող վտանգները

- Հեղեղները, կարկտահարությունը քշում տանում են դաշտերի ցանքսը, որը մեծ վնաս է հասցնում գյուղատնտեսությանը:
- Անձրևների, ձնհալների ջրերը վատթարացնում են առանց այն էլ անմխիթար գյուղամիջյան ճանապարհները:

Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ բաեկարգ և ամենաբարեկեցիկ

բնակավայրերից մեկը:
Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում:
- Կազմակերպել բնակչության մշակութային կյանքը և ստեղծել հանգիստ անցկացնելու ժամանցային վայրեր
- Ապահովել մարդատար և բեռնատար մեքենաների նորմալ, անխափան և անվտանգ աշխատանքը:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Ծրագիր՝3.1. Հակակարկտային կայանների տեղադրում

Գրեթե յուրաքանչյուր տարի կարկտահարությունից լուրջ տուժում է գյուղացու մեծ դժվարությամբ ստեղծած բերքը: Մարդիկ հուսալքվում են և իրենց սեփական վարելահողերը թողնում անմշակ: Այդ իսկ պատճառով շտապ անհրաժեշտ է կարկտահարման կայանի ձեռք բերում և տեղադրում,որի արդյունքում մարդկանց մոտ նորից կվերականգնվի հույս ու հավատը իրենց իսկ աշխատանքից ստեղծված բերք ու բարիքով: Շատերը հուսալքվում են և սեփական վարելահողերը թողնում անմշակ:

Ծրագրի նպատակը՝ երբ համայնքը ձեռք բերի և տեղադրի հակակարկտային կայան,ապա հողը նորից կգտնի տիրոջը: Կապահովենք բերք ու բարիքի բարձր ցուցանիշ: Կբարելավի մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակը: Կհեշտանա հողերի վարձավճարների հավաքագրումը: Մեկ հակակարկտային կայանի արժեքը կազմում է 3800000 /երեք միլյոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Ակնկալում ենք պետության աջակցությունը, ինչպես նաև այլ հասարակական կազմակերպությունների աջակցությունը, իհարկե պարտավորվում ենք ներդնել մեր մասնեբաժինը:

Ծրագիր 3.2.Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում

2. Անհրաժեշտ է նաև ժամանակակից գյուղտեխնիկայի ձեռք բերում, քանի որ հնամաշ խորհրդային տարիների գյուղտեխնիկան այսօր արդեն չի արդարացնում: Ձեռք բերելով գյուղտեխնիկա վարելահողերը ավելի որակյալ

կմշակվեն: Վարձավճարները կդառնան ավելի մատչելի, միաժամանակ կիջնի գյուղմթերքի ինքնարժեքը:Մեկ միավոր գյուղտեխնիկայի արժեքը կազմում է ութ միլյոն ՀՀ դրամ:

3. 3.Չափազանց կարևոր է նաև համայնքի փողոցների լուսավորությունը:Այն հնարավորություն կտա համայնքի բնակիչներին երեկոյան ժամերին ավելի ազատ և անկաշկանդ տեղաշարժվելու: Փողոցների լուսավորության ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է 1,5 մլն ՀՀ դրամ:

3.4Համայնքում անհրաժեշտ է նաև աղբահավաքման վայրի հիմնում, որի արդյունքում կապահովենք շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը: Այն մոտավոր հաշվարկներով կծախսվի ութ հարյուր հազար ՀՀ դրամ:

3.5Գյուղում ջրահեռացման խողովակների անցկացում

Սելաֆների և ձնհալների պատճառով անմխիթար վիճակում է գյուղամիջյան ճանապարհները: Նույն վիճակում են նաև դաշտեր գնացող ճանապարհները: Ջրահեռացման խոխովակներ անցկացնելով մենք կփրկենք գյուղամիջյան ճանապարհների ամբողջությամբ քայքայմանը և հնարավորություն կստեղծենք գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման գործում:

1.Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Վերջին տարիներին սելաֆներն ու անձրևաջրերը խարխլել են ինչպես գյուղամիջյան ճանապարհները,այնպես էլ հանդամիջյան ճանապարհները, որը մեղմ ասած դժվարեցնում է նորմալ երթևեկությունը:

Անձրևաջրերը կարող են մեծ վնաս հասցնել նաև ջրագծի խողովակներին:

2.Ծրագրի նպատակն ու խնդիրները

- Կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:
- Կանխել գյուղամիջյան առանց այն էլ անմխիթար ճանապարհների վատթարացումը:

3.6.Ջրահեռացման ծրագրի ավարտից հետո անհրաժեշտություն է առաջանում գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների վերանորոգման գործը:

Ծրագրի նպատակն է՝Վերանորոգվելով գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհները՝ մենք կապահովենք գյուղում անվտանգ երթեվեկություն, ինչպես նաև հնարավորություն այն խոտհարքների օգտագործման, որոնք մինչ այսօր չի օգտագործվում հանդամիջյան դժվարանցանելի ճանապարհների պատճառով:

3.7Բուժկետի շենքի տանիքի և հատակի վերանորոգում,որի վերանորոգման արժեքը ըստ մասնագետների կազմում է երկու միլյոն ՀՀ դրամ

3.8Գործող մանկապարտեզի շենքի տանիքի և հատակի վերանորոգում:Մամկապարտեզը ունի երկու խումբ, ութ աշխատող և հաճախում է 42 երեխա:

Վերանորոգման արժեքը կազմում է 2,5 մլն ՀՀ դրամ:

3.9 Հոբարձի համայնքի մշակույթի տան վերակառուցում

Հոբարձի համայնքի բնակչությունը երկրաշարժից հետո զրկվել է մշակույթի տնից, որի պատճառով խաթարվել է բնակչության մշակութային կյանքը, չկան հանգիստ անցկացնելու ժամանցային վայրեր:
Այժմ համայնքում մշակույթի տունը գտնվում է կիսակառույց վիճակում, որը վերակառուցելու համար անհրաժեշտ է պետական աջակցություն:

1.Ծրագրի հիմնական նպատակներն են

- Ազգաբնակչության կենսական պայմանների բարելավում
- Մշակույթի և սպորտի զարգացում գյուղում
- Բարեկեցության բարձրացում

4.ՀՀԶԾ-ի ֆինանսավորումը՝

Ակնկալում ենք պետության և այլ հասարակական դոնոր կազմակերպությունների աջակցությունը՝ պարտավորվելով ներդնել մեր համայնքի ներուժը և մասնեբաժինը:


Փողոցների լուսավորության ապահովում
Հոբարձի համայնքի մշակոյթի տան վերանորոգում
Բուժկետի շենքի հատակի և տանիքի վերանորոգում
Համայնքում հակակարկտային կայանների տեղադրում
Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր
Համայնքի գործող մանկապարտեզի տանիքի և հատակի վերանորոգում
Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում
Գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների վերանորոգում
Աղբի հավաքման վայրի հիմնում՝ապահովելով շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը